ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____Ա « ____» _____ **2023 թ.** **ք.Երևան**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 77-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-Ի N 914-Ն և 2023 թվականի ապրիլի 21-ի N 595-Ն որոշումների պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Անշարժ գույքի վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնման-ընդունման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) վարձակալության և անհատույց օգտագործման պայմանագրերով սահմանված ժամկետում իրականացնել անշարժ գույքի հանձնման աշխատանքները.

2) վարձակալության և անհատույց օգտագործման պայմանագրերի դադարման (լուծման) պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել անշարժ գույքի ընդունման աշխատանքները, եթե համապատասխան իրավական ակտով այլ ժամկետ նախատեսված չէ.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված հանձնման-ընդունման ակտերը կազմել 4 օրինակից, որից մեկական տարբերակը 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական

վարչությանը ու Պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնին:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի 2019 թվականի մայիսի 23-ի «Հանձնաժողով ստեղծելու, գործառույթները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2012 թվականի փետրվարի 14-ի N 17-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 77-Ա հրամանը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել տվյալ ոլորտը համակարգող պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալին:

29.05.2023

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ Signed by: AVETISYAN ARNAK 1701920336

Հավելված
Պետական գույքի կառավարման
կոմիտեի նախագահի 2023 թվականի ----
---------- -ի
----------Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՑԾՎՈՂ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Աննա Վարդազարյան	Պետական գույքի տնօրինման վարչության Պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման բաժնի պետ, հանձնաժողովի նախագահ
Լուսինե Խաչամյան	Պետական գույքի տնօրինման վարչության Պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Ծողակաթ Էլբակյան	Պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Ալբերտ Դանիելյան	Պետական գույքի տնօրինման վարչության Պետական գույքի վարձակալության և անհատույց օգտագործման տրամադրման բաժնի ավագ մասնագետ, հանձնաժողովի անդամ
Էդգար Պողոսյան	Իրավական ապահովման և դատական ներկայացուցչության բաժնի ավագ իրավաբան, հանձնաժողովի անդամ
Սիրանուշ Իսոյան	Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության Հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի ավագ մասնագետ, հանձնաժողովի անդամ